# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**«ԵՊՀ-ԷԱՃԱՇՁԲ-24/201» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 — «08» հոկտեմբերի 2024 թ., ժամը 14:00

Մասնակցում էին՝
*հանձնաժողովի նախագահ՝*
Ի. Սահակյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),
*հանձնաժողովի անդամներ՝*
Կ. Մանուկյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
Ա. Այրիյանց՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),
*հանձնաժողովի քարտուղար՝*
Ա. Աղուզումցյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար)։

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃԱՇՁԲ-24/201» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2024 թ-ի հոկտեմբերի 07-ին, ժամը 11:00-ին:

Գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը մեկնարկել է 2024 թ-ի հոկտեմբերի 08-ին, ժամը 11:00 ավարտվել հոկտեմբերի 08-ին ժամը 11:30-ին:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակցի անվանումը | էլ. հասցե, հեռ. |
|---|---|---|
| 1 | ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | էլ. հասցե՝ armana6@mail.ru<br>հեռ.՝ 055 991933 |
| 2 | Մոնոպրինտ ՍՊԸ | էլ. հասցե՝ monoprint1@mail.ru<br>հեռ.՝ 091402586 |
| 3 | Գագիկ Սարգսյան ԱՁ | հեռ.՝ 098 080065 |

**3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.**

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

| Չափա-բաժնի համար | Չափաբաժնի անվանումը | Զբաղեց-րած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշ-վային գին | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգա-վիճակ* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | Հրավիրատոմս | 1 | Մոնոպրինտ ՍՊԸ | 150000 | 124999 | 20 % | 149998.80 | |
| | | 2 | ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | 150000 | 416600 | 20 % | 499920 | Մերժված |
| 2 | Rollup բաններ (կոնստրուկցիայով) | 1 | ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | 100000 | 83333 | 20 % | 99999.60 | |
| | | 2 | Գագիկ Սարգսյան ԱՁ | 100000 | 99000 | 0 % | 99000 | |
| 3 | Բաներ | 1 | ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | 60000 | 49998 | 20 % | 59997.60 | |
| | | 2 | Գագիկ Սարգսյան ԱՁ | 60000 | 59000 | 0 % | 59000 | |

* Մերժման հիմք՝ նախահաշվային գնի գերազանցում:

**4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցում չի եղել:

**6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) ընտրված մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:**

ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ, Մոնոպրինտ ՍՊԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**7. Տեղեկատվություն գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և/կամ չշտկման մասին**

Գնահատման ընթացքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

**Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**8. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել՝

| N | Մասնակցի անվանում | Չափաբաժնի համար |
|---|---|---|
| 1 | ՄՌԱՎ ՊՐԻՆՏ ՍՊԸ | 2,3 |
| 2 | Մոնոպրինտ ՍՊԸ | 1 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**9. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին**

9.1. Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 1-3-րդ չափաբաժինների համար և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**10. Տեղեկություն՝ հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:**

Անհրաժեշտության դեպքում **«ԵՊՀ-ԷԱՃԱՇՁԲ-24/201»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կհրավիրվի անգործության ժամկետի ավարտի հաջորդող աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ի. Սահակյան _______________ ստորագրություն

Անդամներ՝ Կ. Մանուկյան _______________ ստորագրություն

Ա. Այրիյանց _______________ ստորագրություն

Քարտուղար՝ Ա. Աղուզումցյան _______________ ստորագրություն